

ԶՈՒԱՐՃԱԼԻՓ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Մեղեհները աշխատելու -- Ժողովուրդը -- Դիրքին
իւրաքանչիւր :

ՅՈՒՆԱՅՈՒՆԻՍԿԻ մեղեհները աղոթելու ու ծխոտե-
լու գիւրդին կերպ մը ունին, որուն համար 45 Ժամ
բաւական է :

Ջրին մէջ լուծէ այնչափ աղբորակ (իւնիւն) որչափ որ միւր աղոտելու համար սովորաբար կը
գործածուի : Աղբորակին լուծուելէն ետեւ գիր
աս ջրին մէջ ուղած միւր, ու մաղմաղ կրակի վրայ
թող որ քանի մը Ժամ եփի, ինչուան որ բոլոր
ջուրը եռալով հատնի : Այն ատեն հանէ միւր ու
քսանջուրս Ժամ ծուխի մէջ կախէ, որով այնպի-
սի ախորժեղի համ մը կ'առնու, և այնպէս կը
սնդանայ ու կը կարմրնայ՝ որ ամենեւին տարբերու-
թիւն մը չունենար Համպուրի ծխոտած մեղի-
նէն՝ որն որ շինելու համար շարժանքով աղի
մէջ կը պահեն :

Աս գիւրդին գործողութեամբս կրնաս նաև միւր
աղբը (սալմալ) առանց ծխոտելու :

Սառած խնիւ է Ժիւլիւս Կաթն Լաւաշի Կերպ :

Թի որ առանց զգուշութեան սառած ձուկը
եփելու գնես, սաստիկ ցրտութեան վրայ գալով
տաք՝ ձուկը կը ճաթաւի և կը փարատի, կ'անպի-
տանանայ՝ և իր համն ալ կը կորսնցնէ : Աս բանէս
զգուշանալու համար պէտք է կամաց կամաց ձը-
կան տաքութիւն հաղորդել այս կերպով : Գիր
սառած ձուկդ պաղ ջրոյ մէջ, որ ձուկը սկսի կոր-
սնցնել իր սառածութիւնը : Բայց հինգ վեց
վայրկեանէն ետքը ձուկը լուսով պէտք է ջուրը փո-
խել : այսպէս երկու իրեք անգամ ջուրը փոխելէ
ետքը՝ ձուկին սառածութիւնը կ'անցնի, և կրնաս
ուղածիդ պէս եփել :

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ

Եւստակիոս Ինտիմալիտի :

ՅՈՒՆԱՅՈՒՆԻՍԿԻ օրագրին մէջ զարմանալի գիւտ
մը կը պատմուի : « Այս օրերս, կ'ըսէ, ճինեւրա
հասաւ Պ. Ֆիլիպս, որ նոր գիտութիւն մը հնարե-
ր է, զորն որ ինքը Եւթարա-կենսաբանութիւն 1,
կամ Եւթարական կենսաբանութիւն կ'անուանէ :
և շատ անգամ փորձերը յաջողութեամբ կատարե-
ր է : Պ. Ֆիլիպս Եւթարականութեամբ մի և նոյն ե-
րևոյթները կը ցուցնէ որ և իցէ մարդու վրայ,
ինչ որ մագնիսացունողք կենդանական մագնի-

սականութեամբ մագնիսացեալ մարդկանց վրայ
կը ցուցնեն : Իրեն ըրած պատրաստութիւնները
պարզ են : և իր ըսածին նայելով թէ որ մէկը Ֆի-
լիպսի քանի մը պատրաստած նիւթերուն ծանօթ
ըլլայ՝ կրնայ ինքն ալ ամենայն յաջողութեամբ
կատարել » :

Օրագրաց ըսածին նայելով, մարդուս բնական
կազմութեանը վրայ ազդուութիւն ունի : օրինակի
համար, եւթարականութեամբ զմարդս որ և իցէ
գրքի մէջ անշարժ կը կեցնեն, այնպէս որ եւթարա-
ցեալն ուղեկայ ալ չկրնար իր գիրքը փոխել : Եւթար-
կը կապէ, մարմնոյն անդամներուն շարժումն կու-
տայ : և մինչև որ եւթարականութիւնը չգաղթի շար-
ժումն ալ անկարելի է դադարեցնել : Ալ աւելի
զարմանալին է, որ մարդուն մտաւորական կարո-
ղութեանցը վրայ ալ կ'իշխէ : Եւթարականացելոյն
յիշողութիւնը կը վերցնէ ու նորէն կուտայ, այս-
ինքն բան մը յանկարծ միտքը բերել կուտայ, ու
նորէն յանկարծ կը մոռցնէ : այսուհետեւ առա-
ջին տառը բոլորովին մոռցնել, իսկ մէկայնոնք
կարգաւ ըսել կուտայ : Իր անունը կը մոռցնէ, այն-
պէս որ որչափ ալ մտածէ՝ չկրնար միտքը բերել : և
այս ամէն թէ մտաւորական և թէ արտաքին գո-
ծողութեանց մէջ եւթարացեալը բոլորովին ըզ-
գաստ է ու խելքն ալ գլուխը : Բայց մենք աս գիւ-
տին ստուգութեանը չենք կրնար վկայել : մանա-
ւանդ մտաց վրայ բանեցուցած զօրութիւնը յայտ-
նի խելքիդ գէմ կ'երևայ : որ է իր ուղած բառը մոռ-
ցնել տալ եւթարացելոյն : Բայց եթէ իրաւ ալ է-
ղած ըլլայ, ասով կ'երևայ մարդուս ակարամտու-
թիւնը, որ մարդկային բնութեան պահանջի կազ-
մութեան վրայ այսչափ երկար զննութիւններով
խելք հասցնել չկրնալէն ետեւ, բնութեան փնտ-
հասցնելն ալ իրեն սլարծելու նիւթ կը համարի :

Անիւս Լաւի :

ԳԵՂԱՆԵՍԻ նորակիրթ տարրալոյծ մը միտքը
գրեթէ որ ոսկի շինելու կերպը գտեր է, ու այս
բանս իրեն նիւթ առնելով կը պարծենար : Այս
մարդս լսելով թէ Լեոն Ժ. պապը նորահնար ճար-
տարները կը յարգէ և կը վարձատրէ, մեծ յու-
սով մը կ'իշխայ պապին առջևը կը անկուի, ու կը
սկսի երկայն բարակ ու դարձուգարձ կերպերով
պատմել իրեն գիւտը, ըսելով թէ ալ ասկէց վերջը
առատ ոսկի պիտի ունենանք : Պապը այս իրեն
կերպերէն և խօսակցութենէն կ'իմանայ որ շատ
խօսին մեծն է : ուստի իրեններուն հրաման կու-
տայ որ ի վարձ այս տարրալոյծին ճարտարու-
թեանը տան անոր պարապ մեծ պարկ մը, ու ետքը
կը դառնայ կ'ըսէ : « Ալ ոսկին գանալէդ վերջը
քեզի մէկհասակ հարկաւոր բան այս պարկն է որ
հանածդ մէջը լեցնես ու վայելես » :

1 Գ.Է. Electro-biologie.